



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Երևան, Կառավարական փուն 1

Ո Ր Ո Շ ՈՒ Մ № 02/12

(Ա/Ձ Մհեր Ազոյանի 10.11.2017թ.-ի վարչական բողոքը բավարարելու մասին)

Ք. ԵՐԵՎԱՆ

«22» դեկտեմբերի 2017թ.

ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովը՝ նախագահությամբ ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի, ուսումնասիրելով ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 17.10.2017թ. թիվ 57/3 որոշման վերաբերյալ Ա/Ձ Մհեր Ազոյանի 10.11.2017թ.-ի վարչական բողոքը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Բողոքի էությունը և ներկայացված պահանջը.

Ա/Ձ Մհեր Ազոյանը (այսուհետ նաև՝ Ա/Ձ կամ Բողոք բերած անձ) բողոք է ներկայացրել ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով (այսուհետ՝ նաև Հանձնաժողով)՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Գանգատարկման հանձնաժողով) 17.10.2017թ. թիվ 57/3 որոշման (այսուհետ նաև՝ Որոշում) վերաբերյալ:

Բողոքը մուտքագրվել է Հանձնաժողովի քարտուղարություն 10.11.2017թ.-ին:

Բողոք բերած անձը նշել է, որ 18.01.2016թ. գրանցվել է որպես անհատ ձեռներեց «Մհեր Ազոյան» ընտանեկան ձեռնարկատիրություն՝ ՀՎՀՀ 89067828, որը զբաղվում է հյուրանոցային տնտեսությամբ, զբոսաշրջությամբ և ներկայացված է «Booking.com» միջազգային հյուրանոցային ցանցում որպես «Azoyan holiday resort»:

Բողոք բերած անձը որպես բողոքի փաստական և իրավական հիմքեր նշել է, որ ՊԵԿ-ը կամայականորեն է կիրառում «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 13.10-րդ հոդվածը, որի ուժով ընտանեկան ձեռնարկատիրությունները (այսուհետ՝ նաև Ձեռնարկատիրություն) ազատվում են բոլոր տեսակի պետական հարկերից՝ ներառյալ երրորդ երկրից ընտանեկան ձեռնարկատիրության մասով ապրանքների ներմուծման դեպքում:

Մասնավորապես, դեռևս 16.02.2016թ. ԱՄԷ-ից Ձեռնարկատիրության մասով Բողոք բերած անձը ներմուծել է կահույք և մաքսագերծել՝ կիրառելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 13.10-րդ հոդվածով սահմանված արտոնությունը:

Ձեռնարկատիրության մասով 18.07.2017թ. ներմուծել է նաև «Միթսուբիշի L 200» պիկապ տեսակի մարդատար ավտոմեքենա, մասնավորապես՝ զբոսաշրջության նպատակով տարածաշրջանի դժվարանցանելի տեսարժան վայրերը ցուցադրելու համար, սակայն ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից չի թույլատրվել կատարել մաքսագերծում՝ հրաժարվելով կիրառել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 13.10-րդ հոդվածի պահանջը:

Բողոք բերած անձը ՀՀ ԿԱ ՊԵԿ մաքսային մարմնի կողմից կայացված վարչական ակտը բողոքարկել է ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով, որի 17.10.2017թ. թիվ 57/3 որոշմամբ գանգատը մերժվել է:

Բողոք բերած անձը գտնում է, որ Գանգատարկման հանձնաժողովի որոշումը ոչ իրավաչափ վարչական ակտ է, որի հիմքում դրված է այն հանգամանքը, որ. «Ձեռնարկատիրության կողմից «Միթսուբիշի L 200» մեքենայի ներմուծումը **ըստ էության** չի վերաբերվում ընտանեկան ձեռնարկատիրության մասով ապրանքների ներմուծման դեպքին»:

Ըստ բողոք բերած անձի՝ վարչական մարմինը իր որոշման հիմքում չի դրել որևէ իրավական կամ փաստական հիմնավորում, թե ինչու իրեն չի տրամադրվում «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 13.10-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արտոնությունը, ավելին, ՀՀ ֆինանսների նախարարի 23.01.2015թ. թիվ 3 պաշտոնական պարզաբանման համաձայն, ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվողների կողմից ընտանեկան ձեռնարկատիրության մասով ապրանքների ներմուծման դեպքում կիրառելի են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 13.10-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները: Սույն դրույթը չի պարունակում որևէ

չափանիշ, բացառություն կամ լրացուցիչ տեղեկություններ կամ փաստաթղթեր ներկայացնելու պահանջ՝ հիմնավորելու համար, որ ապրանքները ներմուծվել են ընտանեկան ձեռնարկատիրության մասով: Վարչական մարմնի կողմից ընդունված վարչական ոչ բարենպաստ ակտը պետք է լինի հստակ և չպարունակի անորոշ հասկացություններ, ինչպիսին է «ըստ էության» տերմինը: Ըստ Բողոք բերած անձի՝ արդյունքում, վարչական մարմնի կողմից խախտվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի պահանջը, այն է՝

«1. Վարչական ակտը պետք է ձևակերպվի հստակ և հասկանալի:

2. Վարչական ակտի բովանդակությունը պետք է շարադրվի այնպես, որպեսզի դրա հասցեատիրոջ համար ակնառու լինի, թե իրեն ինչ իրավունք է տրամադրվում, իր որ իրավունքն է սահմանափակվում, իրեն ինչ իրավունքից են զրկում, կամ իր վրա ինչ պարտականություն է դրվում»:

Նույն օրենքի 57-րդ հոդվածը սահմանում է, որ գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտը պետք է պարունակի հիմնավորում, որում պետք է նշվեն համապատասխան որոշում ընդունելու բոլոր էական փաստական և իրավական հիմքերը: Վարչական մարմնի հայեցողական լիազորությունների իրականացման արդյունքում ընդունված վարչական ակտի հիմնավորումից պետք է պարզ լինեն այն նկատառումները, որոնց հիման վրա վարչական մարմինն ընտրել է տվյալ լուծումը:

Ըստ Բողոք բերած անձի, իր կողմից բազմիցս ներկայացվել են հիմնավորումներ ներմուծված փոխադրամիջոցը բացառապես ընտանեկան ձեռնարկատիրության շրջանակներում օգտագործելու վերաբերյալ, այն է՝

- իրենց այցելած հյուրերին Սիսիանի դժվարանցանելի տեսարժան վայրերը ցուցադրելու համար, ինչպիսիք են Թանահատի վանք (մեքենան անցնում է գետի միջով), Նազենի հրաբխային խառնարան (3230մ բարձր.), Կոթուրի տաք ջրաղբյուր (2900մ), Ուխտասարի ժայռապատկերներ (3100մ-3400մ) և այլ նմանօրինակ վայրեր:

- մեքենան ամենազնաց է, չափերով մեծ, անվադողերը նախատեսված են դաշտային ճանապարհների համար և ոչ մի կերպ նպատակահարմար չէ քաղաքային երթևեկության կամ անձնական նպատակների (թաղում, հարսանիք) համար:

Բողոք բերած անձը նշել է նաև, որ ինքն ունի ևս 2 այլ մեքենաներ՝ ընտանիքի կարիքները հոգալու համար, սակայն դրանք չեն կարող հաղթահարել վերոնշյալ ճանապարհները, Ձեռնարկատիրությունն անհրաժեշտությունից ելնելով է ներմուծել մեքենան՝ կրելով լուրջ ֆինանսական դժվարություններ: Նույն պարամետրերով մեքենաներից է օգտագործում «Գարդման տուր» տուրիստական ընկերությունը, որը ՌԽստասարի ամենահաճախակի այցելուներից է:

Բողոք բերած անձը նշել է, որ օրենքով ապրանքների տարանջատում չկա, նախատեսված չէ ապրանքների ցանկ, որոնց նկատմամբ կիրառելի է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 13.10-րդ հոդվածի արտոնությունը կամ հակառակը: Այսինքն, օրենքը չի նախատեսում բացառություններ, ինչպես նաև լրացուցիչ տեղեկություններ կամ տվյալներ, չկան օրենքով սահմանված չափորոշիչներ:

Անդրադառնալով ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի պատասխան գրության այն մասին, ըստ որի՝ «մասնավորապես, գործում առկա ապացույցներով չի հիմնավորվում նշված տրանսպորտային միջոցը բացառապես ընտանեկան ձեռնարկատիրության մասով օգտագործելու հանգամանքը», Բողոք բերած անձը առաջադրում է հետևյալ հարցը՝ որ իրավական ակտում է նախատեսված այն ապացույցների ցանկը, որը պետք է ներկայացվեր, ինչը Ձեռնարկատիրության կողմից չի արվել, կամ ինչ լրացուցիչ տեղեկություն էր անհրաժեշտ, որ մեքենան ներմուծված է «բացառապես» ընտանեկան ձեռնարկատիրության մասով:

Ըստ Բողոք բերած անձի՝ վարչական մարմնի կողմից նաև խախտվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջը, այն է՝ վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել: Արգելվում է անձանցից պահանջել իրենց ներկայացրած տվյալները, տեղեկությունները հավաստող փաստաթղթեր կամ լրացուցիչ տեղեկություններ, եթե այդ պահանջը սահմանված չէ օրենքով: Եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա ինքը պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար:

Հետևաբար, ոչ թե անձն է պարտավոր ապացուցել իր կողմից տրամադրված տեղեկությունների հավաստիությունը, այլ վարչական մարմինն է պարտավոր

միջոցներ ձեռնարկելու ապացուցելու հակառակը (եթե իհարկե ունի հիմնավոր կասկածներ):

Բողոք բերած անձը նշել է նաև, որ յուրաքանչյուր մաքսային չձևակերպված օրվա համար այս պահին հաշվարկվում է 1.600 դրամ վճար մեքենայի պահպանության համար, նաև առկա է պատասխանատվություն՝ ընդհանուր 100.000 ՀՀ դրամի չափով, չնայած այն հանգամանքին, որ վարչական մարմնի ոչ բարենպաստ ակտի բողոքարկումը կասեցնում է ակտի կատարումը մինչև հարցին վերջնական լուծում տրվի, հետևաբար մեքենան չձևակերպելը հետապնդում է իրավաչափ նպատակ և հնարավոր չէ՝ մինչև սույն հարցին վերջնական լուծում տալը:

Հաշվի առնելով վերոգրյալը Բողոք բերած անձը խնդրել է չեղարկել Գանգատարկման հանձնաժողովի 17.10.2017թ. թիվ 57/3 որոշումը և թույլատրել Ձեռնարկատիրությանն օգտվելու իրեն հասանելիք արտոնությունից՝ կատարել «Միթսուբիշի L 200» մեքենայի մաքսագերծումը՝ կիրառելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 13.10-րդ հոդվածը:

2. Մասնակցի դիրքորոշումը.

Բողոք բերած անձի դիրքորոշումը հստակեցնելու նպատակով Հանձնաժողովը 2017թ.-ի դեկտեմբերի 22-ին անցկացրել է լսումներ, որին ներկայացել էին Բողոք բերած անձ Մհեր Ազոյանը և լիազորված անձ Օվսաննա Ստեփանյանը:

Վերջիններս լսումների ընթացքում պնդեցին բողոքը. լրացուցիչ նյութեր և փաստարկներ չներկայացվեցին:

3. Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Բողոք բերած անձի և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից Հանձնաժողովին ներկայացված փաստաթղթերից հետևում են հետևյալ փաստական հանգամանքները.

3.1. Բողոք բերած անձը 21.07.2017թ. դիմում է ներկայացրել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահին՝ տեղեկացնելով, որ Արարատյան մաքսատուն-վարչությունում բանավոր պարզաբանել են, որ Ձեռնարկատիրության մասով ներմուծված ավտոմեքենան չի ազատվում ԱԱՀ-ից՝ խնդրելով տալ պարզաբանում, թե որ

օրենքով ներմուծված ավտոմեքենան չի ազատվում ԱԱՀ-ով հարկումից:

3.2. Բողոք բերած անձը 28.07.2017թ. դիմում է ներկայացրել ՀՀ վարչապետին՝ խնդրելով վերջինիս միջամտությունը օրենքի ճիշտ կիրառման հարցում:

3.3. Ի պատասխան վերը նշված դիմումների՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը 03.08.2017թ. թիվ 06/3-1/28559-17 գրությամբ հայտնել է, որ « ՀՀ ֆինանսների նախարարի 23.01.2015թ. «Ընտանեկան ձեռնարկատիրության հարկման որոշ հարցերի վերաբերյալ» N 3 պաշտոնական պարզաբանման 3-րդ կետի համաձայն՝ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվողների կողմից ընտանեկան ձեռնարկատիրության մասով ապրանքների (ինչպիսին չի կարող հանդիսանալ Ձեր գրությամբ նշված ավտոմեքենան) ներմուծման դեպքում կիրառելի են «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13.10-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները: Հաշվի առնելով վերոնշյալը՝ հայտնում ենք, որ Ձեր գրությամբ նշված դեպքում ավտոմեքենայի ներմուծումը չի համարվում ընտանեկան ձեռնարկատիրության մասով կատարվող ներմուծում»:

3.4. Բողոք բերած անձը 15.08.2017թ. դիմում է ներկայացրել ՀՀ վարչապետին՝ խնդրելով հանձնարարել ՊԵԿ-ին վերանայելու իրենց տեսակետը կամ տալ հստակ պատասխան, թե որ իրավական ակտով է հիմնավորվում, որ Բողոքում նշված ավտոմեքենան չի համարվում ընտանեկան ձեռնարկատիրության մասով ներմուծված:

3.5. ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալը ներկայացրել է պատասխան գրություն, որում նշված է, որ Բողոք բերած անձին 03.08.2017թ. տրվել է պատասխան:

3.6. ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանի առ 18.01.2016թ. դրությամբ քաղվածքի համաձայն, Մհեր Վիլիկի Ազոյանը որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվել է 18.01.2016թ.-ին, հաշվառման համարը՝ 88.884760:

3.7. ՀՀ ԿԱ ՊԵԿ Գորիսի տարածքային հարկային տեսչություն 01.02.2017թ. մուտքագրվել է Ա/Ձ Մհեր Ազոյանի հայտարարությունը՝ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսանալու վերաբերյալ, համաձայն որի՝ Ձեռնարկատիրությունում ներգրավված անձինք են՝ Վիլին և Իզաբել Ազոյանները և Իզաբելա Ռաթնոսյանը:

3.8. ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչության 21.07.2017թ. տրված տրանսպորտային միջոցի զննության թիվ 15887 քարտի համաձայն, «Միթսուբիշի L 200» ավտոմեքենայի զննության պահին խախտումներ չեն հայտնաբերվել:

3.9. Ա/Ձ-ի կողմից Մեղրիի մաքսակետում 18.07.2017թ. լրացվել է «Որպես տարանցման հայտարարագիր օգտագործվող տրանսպորտային (փոխադրման), առևտրային կամ այլ փաստաթղթերի վերաբերյալ» թերթիկ, որում առկա են գրառումներ հետևյալ բովանդակությամբ՝ «Տեղյակ եմ Մաքսային միության մաքսային օրենսգրքի 223-րդ հոդվածով սահմանված պարտավորությունների մասին», «Տեղյակ եմ Մաքսային միության մաքսային օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածով սահմանված պարտավորությունների մասին»:

3.10. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի պատասխանների դեմ Բողոք բերած անձը 19.08.2017թ. գանգատ է ներկայացրել Գանգատարկման հանձնաժողովին՝ խնդրելով վերանայել ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի պատասխանները և թույլատրել մեքենայի մաքսագերծման գործարքը կատարել՝ առաջնորդվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 13.10-րդ հոդվածի 1-ին մասով:

3.11. Գանգատարկման հանձնաժողովի 17.10.2017թ. թիվ 57/3 որոշմամբ գանգատը մերժվել է:

4. Պատճառաբանություններ և եզրահանգումներ.

Բողոքի և դրա քննարկման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ բողոքը ենթակա է բավարարման հետևյալ հիմնավորմամբ.

Սույն բողոքի քննության համար Հանձնաժողովը էական է համարում հետևյալ հարցադրումներին անդրադառնալ՝

- Բողոք բերած անձի կողմից ավտոմեքենայի ներմուծումն իրականացվել է արդյոք որպես ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսացող անհատ ձեռնարկատիրոջ կողմից:

Նշված հարցադրման առնչությամբ Հանձնաժողովը գտնում է, որ Բողոք բերած անձի՝ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսանալու հանգամանքը հիմնավորված է սույն գործի փաստական հանգամանքներով՝ ելնելով հետևյալ իրավակարգավորումներից.

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 13.7.-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Հարկային օրենսդրության կիրառության իմաստով՝

1) ընտանեկան ձեռնարկատիրություն է համարվում շահույթ (եկամուտ) ստանալու նպատակով ընտանիքի մեկից ավելի անդամների կողմից համատեղ իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունը.

2) ընտանիքի անդամներ են համարվում ծնողը, ամուսինը, զավակը, եղբայրը, քույրը:»:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտներ կարող են համարվել սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված պայմանը բավարարող Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ համարվող առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը (այսուհետ սույն գլխի կիրառության իմաստով՝ նաև անձինք), այդ թվում՝ նոր ստեղծված (պետական գրանցում ստացած կամ հաշվառված) կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը: Ընդ որում՝

1) անհատ ձեռնարկատերը կարող է համարվել ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ, եթե վերջինս իր գործունեությունն իրականացնում է բացառապես իր ընտանիքի անդամների (այդ թվում՝ որպես վարձու աշխատող) միջոցով »:

Օրենքի 13.8.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն. «Սույն օրենքի 13.7-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու պայմանը բավարարող անձն ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ է համարվում՝

1) յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից մինչև այդ տարվա ավարտը (բացառությամբ օրենքով նախատեսված՝ տարվա ընթացքում շրջանառության հարկ կամ ԱԱՀ վճարող համարվելու դեպքերի), **եթե մինչև այդ տարվա փետրվարի 20-ը իր հաշվառման վայրի հարկային մարմին է ներկայացրել վերադաս հարկային մարմնի ղեկավարի հաստատած ձևով ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն** և ընտանեկան ձեռնարկատիրությունում ներգրավված անձանց՝ ընտանիքի անդամ լինելը հիմնավորող համապատասխան փաստաթղթեր»:

Սույն գործով հաստատված է, որ Մհեր Վիլիկի Ազոյանը որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվել է 18.01.2016թ.-ին, իսկ 01.02.2017թ.-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ

Գորիսի տարածքային հարկային տեսչություն է ներկայացրել հայտարարություն՝ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսանալու վերաբերյալ, համաձայն որի՝ Ձեռնարկատիրությունում ներգրավված անձինք են՝ Վիլին և Իզաբել Ազոյանները և Իզաբելա Ռաթնոսյանը:

Հաշվի առնելով նաև այն փաստը, որ քննարկվող վարչական գործի շրջանակներում առկա չէ որևէ տեղեկատվություն առ այն, որ Ա/Ձ Մհեր Ազոյանի մասով առկա են եղել Օրենքի 13.7-րդ հոդվածով ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելը բացառող պայմանները, ինչպես նաև Օրենքի 13.9-րդ հոդվածով սահմանված ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելը դադարեցնելու հիմքեր, Հանձնաժողովը գտնում է, որ Բողոք բերած անձը ունեցել է կոնկրետ, այն է՝ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտի կարգավիճակ:

Արդյունքում, Հանձնաժողովը հաստատված է համարում այն հանգամանքը, որ վիճելի ավտոմեքենայի ներմուծումը կատարելիս Բողոք բերած անձը հանդես է եկել ոչ թե որպես ֆիզիկական անձ Մհեր Ազոյան, այլ անհատ ձեռնարկատեր Մհեր Ազոյան, ինչը համապատասխանաբար հավաստվում է վարչական գործում առկա՝ Բողոք բերած անձի կողմից Մեղրիի մաքսակետում 18.07.2017թ. լրացված «Որպես տարանցման հայտարարագիր օգտագործվող տրանսպորտային (փոխադրման), առևտրային կամ այլ փաստաթղթերի վերաբերյալ» թերթիկով, որում որպես ապրանքը ներմուծող հանդիսացել է անհատ ձեռնարկատեր Մհեր Ազոյանը:

Նշվածից հետևում է, որ ընտանեկան ձեռնարկատիրության կարգավիճակի առկայության պարագայում գործում է Ա/Ձ Մհեր Ազոյանի կողմից իրականացված գործողություններն ընտանեկան ձեռնարկատիրության մասով կատարված լինելու կանխավարկածը, որի հերքման պարտականությունը կրում է վարչական մարմինը:

Գանգատարկման հանձնաժողովի որոշման ուսումնասիրությունից հետևում է, որ վերջինս բողոքի մերժման հիմքում կիրառելի է համարել Մաքսային միության մաքսային օրենսգրքի 223-րդ, 227-րդ և 228-րդ հոդվածներով սահմանված կարգավորումները և դրանցից բխող պարտավորությունների վերաբերյալ Բողոք բերած անձի տեղեկացված լինելու հանգամանքը, որն ըստ էության առավելապես վերաբերում է ներմուծման շրջանակներում հարկային պարտավորություններ կրելուն և համապատասխան մաքսային ընթացակարգի եզրափակմանը, որը սակայն չի բացառում ընտանեկան ձեռնարկատիրության մասով հարկային

պարտավորություններից ազատվելու «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 13.10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթի կիրառումը:

Գանգատարկման հանձնաժողովն ի հիմնավորումն իր որոշման հղում է կատարել նաև ՀՀ ֆինանսների նախարարի 23.01.2015թ. թիվ 3 պարզաբանման այն դրույթին, համաձայն որի՝ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվողների կողմից ընտանեկան ձեռնարկատիրության մասով ապրանքների ներմուծման դեպքում կիրառելի են «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13.10-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները: Նշվածից ելնելով Գանգատարկման հանձնաժողովը եզրահանգել է, որ գործով ձեռքբերված ապացույցներից ելնելով Ա/Ձ Մհեր Ազոյանի կողմից «Միթսուբիշի L 200» տեսակի ավտոմեքենայի ներմուծումը, ըստ էության, չի վերաբերում ընտանեկան ձեռնարկատիրության մասով ապրանքների ներմուծման դեպքին, մասնավորապես՝ գործում առկա ապացույցներով չի հիմնավորվում նշված տրանսպորտային միջոցը բացառապես ընտանեկան ձեռնարկատիրության մասով օգտագործվելու հանգամանքը:

Հանձնաժողովը գտնում է, որ Գանգատարկման հանձնաժողովի կողմից չի իրականացվել գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ուսումնասիրություն, մասնավորապես՝ Գանգատարկման հանձնաժողովի եզրահանգումները չունեն ապացուցողական հիմք. խախտվել է **«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, այն է՝ «Վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:**

Արգելվում է անձանցից պահանջել իրենց ներկայացրած տվյալները, տեղեկությունները հավաստող փաստաթղթեր կամ լրացուցիչ տեղեկություններ, եթե այդ պահանջը սահմանված չէ օրենքով:

Եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա ինքը պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար»:

Ինչպես արդեն նշվեց, ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտի կարգավիճակ ունեցող անհատ ձեռնարկատիրոջ կողմից իրականացված գործողությունը, սույն դեպքում ավտոմեքենայի ներմուծումը, ընտանեկան ձեռնարկատիրության մասով կատարված լինելու կանխավարկածի հերքման և դրա ապացուցման պարտականությունը **«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի և 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի ուժով** կրում է վարչական մարմինը, որպիսի հանգամանքը սակայն, քննարկվող գործի շրջանակերում բացակայում է:

Հանձնաժողովն անդրադառնալով նաև ներմուծված գույքի էությանը հարկ է համարում նշել, որ Օրենքի 13.7.-րդ հոդվածը սահմանել է այն գույքերը, որոնց ներմուծման մասով անձը չի կարող համարվել ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ և որպիսիք են հանդիսանում ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքները, ինչը սակայն կիրառելի չէ ավտոմեքենայի նկատմամբ:

Միաժամանակ անդրադառնալով Գանգատարկման հանձնաժողովի վիճարկվող որոշմամբ մերժված Բողոք բերած անձի պահանջին՝ թույլատրել Ձեռնարկատիրությանն օգտվելու իրեն հասանելիք արտոնությունից և կատարել «Միթսուբիշի Լ 200» մեքենայի մաքսազերծումը՝ կիրառելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 13.10-րդ հոդվածը, Հանձնաժողովը գտնում է, որ օրենքի պահանջը կիրառելի է դրա համար բավարար պայմանների առկայությամբ, այլ ոչ թե վարչական մարմնի թույլտվությամբ: Հետևաբար նշված պահանջը Հանձնաժողովը գնահատում է որպես վարչական մարմնի կողմից դրսևորվող անգործությունը, որը դրսևորվում է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 13.10-րդ հոդվածի կիրառմամբ մաքսազերծումը չիրականացնելով, այն դեպքում, երբ սույն որոշմամբ հիմնավորվել է Բողոք բերած անձի՝ որպես ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտի նկատմամբ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 13.10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգավորման կիրառելի լինելը, ոչ իրավաչափ ճանաչելու պահանջ, որը ենթակա է բավարարման:

Արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ առկա են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետերով սահմանված հիմքեր Գանգատարկման հանձնաժողովի 17.10.2017թ. թիվ 57/3 որոշումն անվավեր ճանաչելու համար, որը միաժամանակ հիմք է հանդիսանում վիճարկվող վարչական ակտը «Վարչարարության

հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով բեկանելու համար:

Վերոգրյալի արդյունքում՝ ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 4-րդ մասի, 77-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ա/Ձ Մհեր Ազոյանի 10.11.2017թ.-ի վարչական բողոքը բավարարել. բեկանել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 17.10.2017թ. թիվ 57/3 որոշումը և հանձնարարել Գանգատարկման հանձնաժողովին կայացնել նոր վարչական ակտ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ակտի ընդունման մասին վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ